ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# «ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ՎԱՂ ԵՐԿԱԹԵ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



***Թբիլիսիի Ազգային թանգարանում նոյեմբերի 20-22-ն անցկացվեց «Կովկասի եւ Անատոլիայի վաղ երկաթե դարաշրջանի հնագիտության հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով, որը ֆինանսավորել էր Շոթա Ռուսթավելու անվան Ազգային գիտական հիմնադրամը եւ Վրաստանի Ազգային թանգարանը:***

Խորհրդաժողովին մասնակցեցին հնագետներ եւ վաղ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության մասնագետներ Հայաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, Թուրքիայից, Ուկրաինայից եւ Ադրբեջանից: Գիտաժողովի նյութերը պատրաստվել ու հրատարակվել են հոդվածների ժողովածուով:

Հայաստանից գիտաժողովին մասնակցեցին «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Բադալյանը եւ նույն բաժնի աշխատակիցներ, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Բաբուխյանը, գիտաշխատող Արմինե Հարությունյանը:

Խորհրդաժողովին «Մեծամորի պեղումները» զեկուցումով հանդես եկավ Աշոտ Փիլիպոսյանը՝ ներկայացնելով 50 տարվա ընթացքում հուշարձանի տարածքում կատարված պեղումների, ինչպես նաեւ 2013-2014թթ. հայ-լեհական միջազգային հնագիտական արշավախմբի կողմից իրականացված համակողմանի աշխատանքների նախնական արդյունքները: Ներկաները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հատկապես անագից պատրաստված (մ.թ.ա. 15-13-րդ դարեր) մեծաքանակ հնագիտական առարկաների հանդեպ: Աշոտ Փիլիպոսյանը տեղեկացրեց, որ 2015թ. պեղումների տարածքի մակերեսը կընդլայնվի:

Վրացի եւ թուրք հնագետները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հատկապես Մեծամորից հայտնաբերված եգիպտական եւ կասսիտական կնիքների հանդեպ: Դա վկայում է, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին Մեծամորը կարեւոր դեր է խաղացել տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական գործընթացներում: Մասնակիցներից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցել 2015թ. Մեծամորի պեղումների 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



# ԴԵՂՈՐԱՅՔ. ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՎ ԵՎ ԱՌԱՆՑ ԴԵՂԱՏՈՄՍԵՐԻ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել առանձին դեղորայքը միայն դեղատոմսերով վաճառելու մասին օրենքը:***

Նոր օրենսդրության համաձայն, դեղատներում, մասնավորապես՝ 2-րդ խմբին պատկանող դեղորայքի վաճառքը, իրականացվում է թիվ 3 ձեւաթղթի ներկայացնելուց հետո: Թեպետ վերոնշյալը որոշակի տարակուսանքի առիթ է դառնում: Մասնավորապես, հարց է ծագում. ինչպե՞ս պետք է վարվեն դեղատան աշխատակիցները, երբ իրենց դիմում է ոմն մեկը, ով իրեն վատ է զգում եւ համապատասխան դեղորայքը գնելու համար դեղատոմս տվյալ պահին ներկայացնել չի կարող: Նման դեպքերը բացառություն չեն: Օրինաչափ հարց է ծագում, թե ի՞նչ է արվում նման դեպքերում հարցի կարգավորման ուղղությամբ, ինչպե՞ս է առողջապահության նախարարությունն իրականացնում դեղատոմսերով դեղորայքի վաճառքի վերահսկողությունը:

Ինչպես տեղեկացրեց նախարարության դեղագործական գործունեության տեսչության դեպարտամենտի վարչության պետ Դավիթ Մաճարաշվիլին, դեղատոմսերով դեղերի վաճառքի մոնիտորինգը պարբերաբար իրականացվում է, եւ գործակալության բոլոր մասնագետները ներգրավված են այդ գործում: «Այս առումով գործում է թեժ գիծ: Ինչ վերաբերում է առանց դեղատոմսերի դեղորայքի վաճառքի փաստերին, ապա նման դեպքեր արձանագրվել են: Դրանցից մեծ մասը կրում է ծայրահեղ անհրաժեշտության բնույթ: Թեպետ այդ հանգամանքը հաշվի է առնվում, եւ գրեթե բոլոր դեղատները նման դեպքերում ներկայացնում են բացատրագրեր»,- ասաց նա:

Ինչպես նշում են դեղատների ցանցերի ներկայացուցիչները, դեղատոմսերով դեղորայքի վաճառքը 100 տոկոսով իրականացնել հնարավոր չէ:

Նախարարության կողմից հաստատված կանոնակարգի համաձայն, երկրորդ խմբին պատկանող դեղորայքն առանց դեղատոմսի վաճառելու դեպքում, դեղատան վարչությունն առաջին դեպքում տուգանվում է 500 լարիով: Տարվա ընթացքում նույն օրինախախտման դեպքում, տուգանքը կազմում է 1000 լարի:

Ինչպես տեղեկացրին նախարարությունից, դեղատներում խստիվ վերահսկողությունը, ներկա դրությամբ, իրականացվում է միայն մայրաքաղաքում, թեպետ ներկայումս աշխատանքներ են տարվում տարածաշրջաններում վերահսկողության ակտիվացման ուղղությամբ:

Ինչպես նշեց Դավիթ Մաճարաշվիլին, դեղագործական գործունեության դեպարտամենտի տեսչական վարչությունում գտնում են, որ դեղատոմսերի համակարգի լրիվ գործարկման համար կպահանջվի որոշակի ժամանակ: Թեպետ դեղատոմսերով վաճառքի համակարգի ներդրումից հետո, երկու ամսվա ընթացքում արդյունքներն ավելի քան գոհացուցիչ են: «Բավականին լավ արդյունքներ ունենք՝ ինչպես բժշկական, այնպես էլ՝ դեղագործական հաստատություններում: Արդյունքները գերազանցեցին մեր սպասելիքները»,- հայտարարեց Մաճարաշվիլին:

Ինչպես նշում են ոլորտի մասնագետները, դեղատոմսերի համակարգի կիրարկման վերահսկողությունը մայրաքաղաքում արդարացված քայլ էր: Մասնագետների հավաստմամբ, իշխանությունն իրականում նախապատրաստված էր վերոնշյալ համակարգի ներդրման հարցում: Թեպետ նույնը չի կարելի ասել ժողովրդի մասին: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ շատերը ցավագին ընդունեցին նորամուծությունը: Դրանց վրա որոշակիորեն նպաստում է այն, որ նախարարությունը վերջնականապես չի հստակեցրել այն դեղորայքների ցուցակը, որոնք վաճառվելու են դեղատոմսերով: Շարունակվում է առանձին անվան դեղորայքը մի խմբից մյուսը տեղափոխելու գործընթացը: Մասնագետները գտնում են, որ առանձին դեղորայքի հարցով նախարարությունը պետք է ձեւակերպի տարբերակվող դեղատոմս՝ որոշակի ժամկետով եւ առանձին հիվանդությունների հարցով, ինչը զգալիորեն կնպաստի հիմնախնդրի սրության թուլացմանը:

***ՋՎԻԱԴ ՄՂԵԲՐԻՇՎԻԼԻ***

ՎԱՐԿԱՆԻՇ

# ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱԶԱՏ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ




***Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հրապարակել է իր «Ազատությունը ցանցում 2014» (Freedom on the Net 2014) ամենամյա զեկույցը: Հետազոտությունն ընդգրկում է 65 երկիր եւ ներառում է 2013 թվականի մայիսից 2014-ի մայիս ընկած ժամանակահատվածը:***

Զեկույցը 0-100 միավորի (0 միավորը ամենալավ վիճակն է, 100-ը՝ ամենավատը) սանդղակով գնահատել է համացանցի ու թվային մեդիայի ազատության մակարդակը:

Զեկույցում երկրները բաժանված են երեք խմբի՝ ազատ (0-30 միավոր), մասամբ ազատ (31-60 միավոր) եւ անազատ (61-100):

Ըստ զեկույցի՝ 65 երկրներից 36-ում համացանցի ազատության ոլորտում բացասական միտում է գրանցվել: Առավել նշանակալի անկում է նկատվել Ռուսաստանում, Թուրքիայում եւ Ուկրաինայում: Նշվում է, որ Ռուսաստանի կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել համացանցի նկատմամբ վերահսկողություն սահմանելու ուղղությամբ, մասնավորապես, Սոչիում Օլիմպիական խաղերի նախաշեմին եւ Ուկրաինայում շարունակական ճգնաժամի ընթացքում:

Վրաստանը 26 միավորով եւ Հայաստանը 28 միավորով ազատ ինտերնետ ունեցող երկրների շարքում են: Ադրբեջանում ինտերնետը մասամբ է ազատ. վարկանիշում այս երկիրը զբաղեցնում են 42-րդ տեղը՝ 55 միավորով:

Իրանում ինտերնետն անազատ է, այս երկիրը 89 միավորով եզրափակում է Freedom House-ի վարկանիշը: Իրավապաշտպան կազմակերպության գնահատմամբ՝ համացանցն աշխարհում ամենաազատը Իսլանդիայում է, ցանցի ազատության մակարդակն այս երկրում 6 միավոր է գնահատված: Նրան հաջորդում են Էստոնիան (8 միավոր), Կանադան (15 միավոր), Ավստրալիան եւ Գերմանիան (17 միավոր), ԱՄՆ-ը (20 միավոր):

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻՆՈՇՎԻԼԻ***

ՀՐԱՏԱՊ

# ՀԵՏԱՁԳՎԵՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ

***Պարտադիր ավտոապահովագրումը անորոշ ժամանակով հետաձգվել է: Որոշ ենթադրություններով, գործընթացը կիրականացվի 2016 թվականին:***

Պարտադիր ավտոապահովագրման ստույգ ժամկետների նշումից հրաժարվեց պետական վերահսկողության ծառայությունը, թեպետ հավաստիացրին, որ դրա հետաձգումը երկար ժամանակ չի տեւի: Ծառայության հավաստմամբ, համապատասխան օրինանախագիծն արդեն ներկայացված է խորհրդարան, եւ դրա քննարկումից ու ընդունումից հետո միայն, հայտնի կդառնա պարտադիր ավտոապահովագրման ժամկետը: Ինչպես նշեցին ծառայությունում, պարտադիր ավտոապահովագրման գործընթացի ներդրման ուղղությամբ, օրենքի իրավաբանական շրջանակի տեխնիկական բաժնի մշակմանը, որը վերաբերում է ապահովագրական գումարի մարմանը, հավելավճարին, պատժատուրքին եւ մյուս հանգամանքներին, ավարտման փուլում է: Որոշ անհարթություններ կան նաեւ պարտադիր ապահովագրման մյուս բաժինների հարցով: Այդ առումով ներկայացված են մի քանի տարբերակներ եւ ներկայումս համապատասխան մարմիններն զբաղված են առկա մանրամասների հստակեցման եւ երկրի պայմաններին համապատասխանեցման աշխատանքով:

Մասնագետների հավաստմամբ, երկրում ավտոապահովագրման գործընթացը հետաձգվել է առնվազն երկու տարով: Հետաձգումը, մասնագետների համոզմամբ, պայմանավորված է մեքենաների տեխզննման գործընթացի հետաձգմամբ: Նրանք գտնում են, որ պարտադիր ապահովագրման օրինանախագիծը պատրաստ չի լինի նաեւ երկու տարի անց, քանի որ նման օրենքի մշակման համար հարկ է հաշվի առնել որոշ հանգամանքներ, մասնավորապես, հարկ է խիստ վերահսկողություն սահմանել մեքենաների ներկրմանը, կարգի բերել ճանապարհային ենթակառույցը, խիստ վերահսկողություն սահմանել ներբերվող վառելանյութի եւ երկրորդական օգտագործման անվադողերի նկատմամբ: Մասնագետների հավաստմամբ, ապահովագրական ընկերություններն իրենք կհրաժարվեն տեխնիկական ստուգում չանցած մեքենաների ապահովագրումից, քանզի դա նոր ռիսկերի ծագման աղբյուր է: Ինչպես հայտարարեց ավտոփորձագետ Դավիթ Մեսխիշվիլին, երկիրը պատրաստ չէ ավտոտեխստուգման գործընթացը ներդնել թեկուզ երկու տարվա ընթացքում: Նույնը կարելի է ասել նաեւ ավտոապահովագրման վերաբերյալ: Այն լուրջ հիմնախնդիրներ կարող է առաջացնել՝ ինչպես վարորդների, այնպես էլ՝ ապահովագրական ընկերությունների համար. «Կարծում եմ, որ ապահովագրական ընկերություններն այդ հարցում շահագրգռվածություն չեն ցուցաբերում: Եվ դա հասկանալի է: Այսօր Վրաստանի ճանապարհներին երթեւեկող 350 հազարից ավելի ավտոմեքենաները քսան եւ ավելի տարեկան են եւ, բնականաբար, տեխնիկապես դրանք նորմալ վիճակում չեն կարող լինել»,- հայտարարեց Մեսխիշվիլին եւ հավելեց, որ պարտադիր ավտոապահովագրման ներդրումը որոշակի բեռ կառաջացնի նաեւ վարորդների համար, քանի որ ոչ մեկը դրա համար պատրաստ չէ: «Տեխստուգման համար մեքենայի նախապատրաստումը նշանակալի գումարներ կպահանջի: Հետեւաբար, ապահովագրության գործընթացը պարտադրվելու է վարորդներին, ինչը լուրջ հիմնախնդիրներ կարող է առաջացնել»,- հայտարարեց ավտոփորձագետը: Նրա հավաստմամբ, տեխստուգման եւ ավտոապահովագրման ներդրման փոխարեն, սկզբնական փուլում առավել նշանակալի ուշադրություն հատկացնեն տեխնիկապես չարդարացված մեքենաների ներկրման հարցի վրա:




«Առավել եւս, որ Եվրամիության հետ ստորագրած համաձայնագրերում ներկայացված են ներկրված մեքենաների ընդունման մաքսային չափորոշիչներ: Դրանում խոսվում է նաեւ ճանապարհային ենթակառույցների եւ անվտանգ երթեւեկության մյուս բաղադրիչների մասին»,- հայտարարեց ավտոփորձագետը:

Թեպետ, ինչպես նշում են ապահովագրությունների ներկայացուցիչները, ավտոապահովագրումը եւ մեքենաների տեխստուգումը միմյանց հետ առնչություն չունեն, թեպետ ապահովագրական փաթեթ ունեցող վարորդներն իրենք շահագրգռված կլինեն ավտոմեքենայի տեխստուգումն անցնելու հարցում:

Այսօրվա տվյալներով, Վրաստանում գործող ապահովագրական 14 ընկերություններից ավտոապահովագրման մշակված ծրագիր ունեն միայն 12-ը: Ներքին գործերի նախարարության տվյալներով, 2013 թվականին Վրաստանում պաշտոնապես գրանցվել էր 874928 ավտոմեքենա: Ցավոք, նախարարության տվյալներում դասակարգված չէ, թե վերոնշյալ ավտոմեքենաների թողարկման ժամկետը, ինչը որոշակի դժվարություն է առաջացնում դրանց տեխնիկական վիճակի մասին ստույգ տեղեկատվության ձեւակերպման հարցում:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՄԱՐԴ

*Նույնիսկ ամենափոքր նկատողությունը կարող է հունից հանել նրան: Դիմացինին թվում է, թե նա անտեղի է վրդովվում՝ առանց հիմնավոր պատճառի: Ինչո՞վ կարելի է բացատրել մարդու նման վարքը:*

Մեզանից յուրաքանչյուրն էլ աջակցության կարիք ունի, չնայած, որ շատերը դա չեն խոստովանում: Սակայն շատերի մեջ դա այնքան ուժեղ է արտահայտված, որ մարդը կախվածության մեջ է ընկնում շրջապատից: Նա դառնում է այն աստիճան խոցելի, որ իր ներքին հավասարակշռությունը եւ ինքնագնահատականը գտնվում է շրջապատի, ուրիշների ձեռքում: Մի փոքր ակնարկն ուղղված իր հասցեին, անվնաս նկատողությունը նա անմիջապես ընկալում է որպես սեփական անձին ուղղված սպառնալիք եւ դիմում է պաշտպանության՝ կոնֆլիկտներ սարքելով: Նրա մշտական զգոնությունը եւ սթափ լինելը վկայում են այն մասին, որ նա շրջապատից ակնկալում է սեր եւ հոգատարություն, եւ դրանց կարիքը շատ է զգում:

### Ուշադրության կենտրոնում

Երբ զգում ենք, որ մեզ լուրջ չեն վերաբերվում, մեր խոսքը ուշադրության չի արժանանում, սկսում ենք որոշակի ձեւով արտահայտել մեր հոգեվիճակը: Այդ ժամանակ ոմանք զայրանում են, դառնում են ագրեսիվ: Այս վարքը հնարավորություն է տալիս, որ անձը հայտնվի ուշադրության կենտրոնում: Զայրույթի ժամանակ արտադրվում է մեծ քանակությամբ ադրենալին, որն էլ ապահովում է էներգիայի մեծ հոսք: Այդ էներգիան հնարավորություն է տալիս, որ մարդն զգա իր ուժը եւ ինքնավստահությունը:

Երբ ձեր զրուցակիցը անընդհատ դրսեւորում է դժգոհություն եւ լարված է զրույցի ժամանակ, ապա դա կարող է վկայել այն մասին, որ նա դժվարանում է արտահայտել այն, ինչ իրականում ուզում է:



Հնարավորություն տվեք, որ նա արտահայտվի, մի ընդհատեք նրան, պարզապես լսեք: Իրավիճակն ավելի մեղմելու համար հարցրեք՝ ինչո՞վ է պայմանավորված նրա զայրույթը, հավատացրեք նրան, որ հասկանում եք եւ պատրաստ եք օգնել: Երբ մարդը գիտակցում է, որ իրեն հասկանում են, ապա ինքն էլ է ցանկանում հարթել կոնֆլիկտը:

### Արգելք «վատ» հույզերի վրա

Երեխաները, ովքեր մեծացել են ընտանիքում, որտեղ վատ կամ բացասական հույզեր արտահայտելը արգելված է եղել, իսկ հույզերը վերահսկելը՝ պարտադիր պայման, ուժերը լարած անընդհատ փորձում են զսպել իրենց զայրույթը, վախը, անհանգստությունը: Ցանկացած բացասական հույզ նրանք ընկալում են որպես սեփական թուլության դրսեւորում: Արդյունքում այդ զգացմունքները չեն անհետանում, այլ ընդհակառակը՝ կուտակվում են եւ վաղ թե ուշ «պայթում» են:

### Ամենակարող զգալու մարմաջ

Ագրեսիվ վարքը բնորոշ է նաեւ այն մարդկանց, ովքեր հիվանդագին մարմաջ ունեն զգալու սեփական ամենակարողության ուժը: Դրա համար նրանք ամեն տեղ եւ ամեն վայրկյան ապացույցներ են փնտրում: Նորմալ է, երբ փոքր տարիքում ծնողները բավարարում են իրենց երեխայի պահանջները: Սակայն, երբ մարդը մեծանում է ու շարունակում է ապրել այդ նույն հոգեբանությամբ, այսինքն՝ չի հասունանում որպես անկախ անհատ, մնում է երեխա, ապա նա աշխարհին ընկալում է այնպես, ինչպես մանկության տարիներին: Երբ չի ստանում իր համար սպասված, ցանկալի արձագանքը միջավայրից, ապա նրա անգիտակցականն այդ ամենն ընկալում է որպես սեփական անձի մերժում: Եվ այդ ժամանակ հասուն մարդը վերածվում է քննադատ երեխայի, եւ կոնֆլիկտն էլ պատրաստ է:

Մարդուն նման վարքի դրդող պատճառները շատ են, պարզապես յուրաքանչյուրն ինքը պետք է հասկանա դրանք:

### Ի՞նչ անել

**1. Մտերիմ եղեք ինքներդ ձեզ հետ**

Լսեք ձեր ներքին ձայնը, ընդունեք այն, որքան էլ դա ձեզ համար անընդունելի լինի: Փորձեք հասկանալ ձեզ եւ ձեր արարքների իրական պատճառները:

**2. Պահպանեք հեռավորություն**

Երբ մենք չափազանց շատ ենք նույնականանում մեր գործունեության հետ, այսինքն՝ երեւույթը չենք տարանջատում մեր անձից, այդ ժամանակ ուրիշների խոսքը մեր սրտին շատ մոտ ենք ընդունում: Ընդունեք, որ դուք ավելին եք, քան այն, ինչի համար ձեզ քննադատում են:

**3. Դրական լուծում**

Նույնիսկ զայրույթը կարող է լինել դրական ուղղվածությամբ: Փորձեք փոխզիջում գտնել: Դուք ունեք իրավունք արտահայտելու ձեր զայրույթը, սակայն առանց դիմացինին նեղացնելու եւ վիրավորելու: Մտովի հետ գնացեք եւ հիշեք, թե ի՞նչ է տեղի ունեցել կոնֆլիկտից առաջ, ի՞նչը խնդիր առաջացրեց: Մինչեւ այդ վերլուծությունը կատարեք, ժամանակ կանցնի, ձեր զայրույթը համեմատաբար կթեթեւանա, եւ դուք լուծում կգտնեք արդեն սթափ ուղեղով:



# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՆԽԱԳԾՎԵԾԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Դեկտեմբերի 9-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության փոխնախագահ, Սենատի նախագահ Դանիլո Աստորիին:*



Հանդիպմանը գոհունակությամբ նշվել է, որ անցնող 2014 թվականը հայ-ուրուգվայական բարեկամական հարաբերությունների զարգացման համար խոստումնալից ու կարեւոր տարի է եւ այն, անկասկած, երկու երկրների փոխհարաբերություններն ավելի խորացնելու նոր հեռանկարներ է բացում:

Զրուցակիցները երկուստեք ընդգծել են միջպետական հարաբերություններում ակնհայտորեն մեծ դեր ունեցող խորհրդարանական դիվանագիտության կարեւորությունը: Սերժ Սարգսյանը եւ Դանիլո Աստորին համակարծիք են եղել, որ երկու երկրների խորհրդարաններում գործող բարեկամության խմբերի գործունեությունն ավելի է ամրապնդում առկա բարեկամությունը:

Հայաստանի նախագահը եւս մեկ անգամ երախտագիտություն է հայտնել Ուրուգվայի իշխանություններին եւ ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում դեռեւս 1965թ. ունեցած անգնահատելի ավանդի համար եւ ընդգծել, որ այդպիսով սկիզբ դրվեց այդ ոճրագործության միջազգային ճանաչման գործընթացին՝ իր արձագանքը գտնելով ամբողջ աշխարհում:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել նաեւ ղարաբաղյան հակամարտության հարցում Ուրուգվայի հավասարակշիռ դիրքորոշումը:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԿՀՍՏԱԿԵՑՎԵՆ ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ



*Բրյուսելում կայացել է Հայաստան-Եվրոպական Միություն համագործակցության կոմիտեի 15-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են Եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ԵՄ Արեւելյան գործընկերության շրջանակներում Հայաստան-ԵՄ համագործակցությանն առնչվող հարցեր:*

Նիստը համանախագահել են ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը եւ Եվրոպական արտաքին հարաբերությունների ծառայության Ռուսաստանի, Արեւելյան Գործընկերության, Կենտրոնական Ասիայի, Տարածաշրջանային համագործակցության եւ ԵԱՀԿ հետ հարաբերությունների վարչության տնօրեն Գունար Վիգանդը:

Նիստում քննարկվել են ՀՀ-ԵՄ առեւտրատնտեսական եւ ոլորտային երկկողմ համագործակցության ապագա իրավական ձեւաչափի ձեւավորմանն ու առեւտրատնտնտեսական հարաբերությունների ապագային, ինչպես նաեւ ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող աջակցությանն ու համապատասխան ծրագրերին առնչվող հարցեր:

Օրակարգում ընդգրկված են եղել նաեւ օրենքի գերակայությանը, մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին, տրանսպորտի եւ էներգետիկայի ոլորտում համագործակցությանը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը, Հայաստան-Թուրքիա հարաբերություններին վերաբերող հարցեր եւ այլն:

Նիստի ընթացքում ներկայացվել եւ քննարկվել են նաեւ վիզայի դյուրացման եւ ռեադմիսիայի համաձայնագրի, վիզայի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի, Հայաստանում արդարադատության ոլորտում ընթացող բարեփոխումների եւ, համապատասխանաբար, մի շարք օրենքներում եւ իրավական ակտերում իրականացվող փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ հարցեր:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը՝ ՀԲ երեւանյան գրասենյակի տնօրեն Լորա Բեյլիի գլխավորությամբ:*

Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակին եւ զարգացման հեռանկարներին, դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությանը վերաբերող հարցեր: Երկուստեք կարեւորվել է համաշխարհային ու տարածաշրջանային տնտեսական իրողություններին եւ միջազգային շուկայի փոփոխվող իրավիճակին համահունչ տնտեսական քաղաքականության իրականացումը եւ համապատասխան տնտեսական միջավայրի ձեւավորումը: Կողմերը եւս մեկ անգամ վերահաստատել են նշված ուղղություններով Հայաստանի կառավարության եւ Համաշխարհային բանկի միջեւ համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը:

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ 85,2 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

*Հայաստանի ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը, KFW բանկի էներգետիկայի դեպարտամենտի տնօրեն Յան Բլումը եւ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի տնօրեն Արամ Անանյանը դեկտեմբերի 9-ին ստորագրել են վարկային եւ ծրագրային համաձայնագրեր:*



«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» ծրագրի 1-ին փուլի ֆինանսավորման նպատակով, KFW բանկը Հայաստանին կտրամադրի 85.2 մլն եվրո արժողությամբ վարկ՝ 75 մլն եվրո սեփական միջոցներից եւ 10.2 մլն եվրո՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տրամադրած ֆինանսական միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է միացնել հայկական ու վրացական էներգահամակարգերը՝ վրացական սահմանին մոտ՝ Այրումում տեղակայվող բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով: Ծրագրի շրջանակում նոր ենթակայանի եւ հոսանքագծի կառուցման շնորհիվ Հայաստանը եւ Վրաստանը կաշխատեն միեւնույն ռեժիմում, ինչը հնարավորություն կտա էլեկտրաէներգիայի պակասուրդի դեպքում ներմուծել, իսկ ավելցուկի դեպքում՝ արտահանել էլեկտրաէներգիա:

Ծրագրի 1-ին փուլի ընդհանուր արժեքը կազմում է 105.2 մլն եվրո: Միաժամանակ ծրագրի 1-ին փուլը կհամաֆինանսավորվի Եվրոպական ներդրումային բանկի կողմից 10 մլն եվրո գումարի չափով տրամադրվելիք վարկային միջոցների եւ Եվրոպական Միության Հարեւանության ներդրումային գործիքի միջոցով տրամադրվելիք 10 մլն եվրո դրամաշնորհային միջոցների հաշվին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԵՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՒՄ Է 1250 ԱՆՁ

*Հայաստանում գործում են տարեցների շուրջօրյա խնամքի 8 հաստատություն (ծերանոցներ), որտեղ բնակվում է 1250 տարեց անձ, տնային պայմաններում խնամքի 2 ծառայություններ, որոնք տներում սպասարկում են ավելի քան 4000 տարեցի, եւ ցերեկային կենտրոններ՝ տարեց մարդկանց համար: Այս մասին հայտարարեց Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Անահիտ Գեւորգյանը:*

«Չեմ կարող ասել, որ այն լիարժեք է իրականանում, սակայն մենք փորձում ենք քայլ առ քայլ իրականացնել միջոցառումներ, որպեսզի կարողանանք տարեցների համար ապահովել արժանապատիվ պայմաններ»,- ասաց Անահիտ Գեւորգյանը:

Չբավարարվելով իրավիճակով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը 2012թ. մշակել է ծերացման հետեւանքների հաղթահարման եւ տարեցների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ռազմավարություն, որը բխում է Մարդկության ծերացման մադրիդյան ռազմավարությունից, որի կատարումը Հայաստանի համար պարտադիր է:

Ըստ նոր հայեցակարգի, մինչեւ 2018թ. կմշակվեն տարեցներին տրամադրվող նոր ծառայությունների մոդելներ՝ ելնելով տարեցների իրական կարողություններից, ըստ որոնց վճարունակ տարեցներին կտրամադրվեն իրենց պահանջներին համապատասխան ծառայություններ, որոնք պետության կողմից երաշխավորված ծառայություններում բացակայում են: Օրինակ՝ կստեղծվեն նոր տիպի խնամքի տներ, որտեղ տարեցը կստանա ավելի բարձր որակի խնամք, շուրջօրյա խնամող դայակի ծառայություն, տարեցների ակումբներ տարբեր ուղղվածությամբ եւ այլն:

### ԱՄՆ ՎԻԶԱՆԵՐ՝ 10 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ

***Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիների համար ՀՀ կառավարությունը սահմանեց առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ 2015 թվականի հունվարի 1-ից: Փոխադարձաբար, ԱՄՆ-ը Հայաստանի քաղաքացիների լայն շերտերի բազմակի մուտքի վիզա կտրամադրի: Ինչպես նշեց Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, ԱՄՆ-ի քաղաքացիների նկատմամբ մուտքի վիզայի պահանջի վերացումը պայմանավորված է Հայ-ամերիկյան միջկառավարական նիստի արդյունքում ստորագրված գործողությունների ծրագրի 28-րդ կետով, որի համաձայն՝ «Երկու կողմերը կվերջնականացնեն վիզայի ազատականացման գործընթացը՝ հաստատելով ազատ վիզայի ռեժիմ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիների համար, ինչպես նաեւ տասը տարի բազմակի մուտքի վիզա Հայաստանի քաղաքացիների համար»: Նախարարի խոսքով՝ առաջիկա հունվարի մեկից Հայաստանի լայն շերտերի ներկայացուցիչները կկարողանան ԱՄՆ-ի մուտքի վիզա ստանալ 10 տարի ժամկետով:***

### ԴՐԱՄԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ 1,5-2,0 ՏՈԿՈՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՆԱՃԻ

***Հայաստանի ազգային արժույթի փոխարժեքի փոփոխությունը կբերի 1.5-2.0 տոկոս լրացուցիչ գնաճի այս եւ հաջորդ եռամսյակներում, որից հետո այդ ազդեցությունը կչեզոքացվի 1 տարվա ընթացքում: Այս մասին հայտնեց Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը՝ խոսելով դրամի արժեզրկման եւ գնաճի վրա դրա ազդեցությունների մասին: «Փոխարժեքը կարեւոր գործոն է գնաճի վրա ազդելու տեսակետից, բայց ոչ որոշիչ: Ճիշտ է, փոխարժեքի փոփոխությունը ազդում է ներմուծված ապրանքների գների վրա, որոնք մեր սպառողական զամբյուղի մոտ 37 տոկոսն են կազմում, սակայն փոխարժեքի ազդեցությունը գների վրա կախված է տարբեր գործոններից, ինչպես, օրինակ, շուկաների կառուցվածքը, մրցակից ապրանքների առկայությունը եւ այլն: Այս պահին Կենտրոնական բանկը գնահատում է, որ 2014 թվականի վերջին եւ 2015 թվականին գնաճը կլինի նպատակային թիրախի շրջանակներում, այսինքն՝ 4+/-1.5 տոկոս»,- ասաց նա: Նշենք, որ նոյեմբերի 24-ից Հայաստանում դրամը սկսել է արժեզրկվել: Ներկայումս դոլարի նկատմամբ դրամի միջին փոխարժեքը շուրջ 455 է:***

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃ

***«Զվարթնոց» եւ «Շիրակ» օդանավակայանները 2014 թվականի հունվար-նոյեմբերին սպասարկել են 1 մլն 931 հազար 554 ուղեւոր, ինչը շուրջ 332 376 ուղեւորով կամ 20,8 տոկոսով ավելի է 2013 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Հաշվետու ժամանակաշրջանում մեկնողների թիվը կազմել է 976 708 ուղեւոր (2013թ. նույն ժամանակաշրջանի 803 523 ուղեւորի փոխարեն), ժամանել է 954 846 (2013-ին՝ 795 652 ուղեւոր): Մեկնողների եւ ժամանողների բացասական հաշվեկշիռը կազմում է 21 862 մարդ (39 910 մարդ՝ հունվար-հոկտեմբերի համեմատականի դիմաց): Մեկնած ուղեւորների տեսակարար կշիռն ընդհանուր ուղեւորափոխադրումների մեջ կազմում է 50,6 տոկոս, 2013 թվականի նույն ժամանակաշրջանի 50,2 տոկոսի փոխարեն:***

***Բեռնափոխադրումների ծավալն աճել է 3 տոկոսով եւ կազմել է 9 478 տոննա, իսկ թռիչք/վայրէջքերի քանակն աճել է 17,3 տոկոսով ու կազմել 9 739:***

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

*15.12.2014. Սուրբ Իգնատիոս, Սուրբ Աղդե հայրապետների եւ Սուրբ Մարութա եպիսկոպոսի հիշատակության օր*

*18.12.2014. Տոն կույսերի՝ Սուրբ Ինդոսի, Սուրբ Դոմնայի, Սուրբ Գղերիկոս քահանայի եւ երկու բյուր նահատակների, ովքեր այրվեցին Նիկոմիդացիների եկեղեցում*

ՊԱՏԱՀԱՐ

## ՀՐԴԵՀ ԲԱԹՈՒՄԻԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

*Երեք մարդ է զոհվել դեկտեմբերի 7-ին Բաթումիի հրատեխնիկայի վաճառքի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով:*



Զոհվածներն աշխատում էին այդ շենքում: Նրանց մահվան հանգամանքներն անհայտ են մնում: Ոստիկանությունը ողբերգության հանգամանքների հետաքննություն է սկսել:

Բաթումիի հրշեջ ծառայության ներկայացուցիչները հայտնել են, որ հրդեհն ընդգրկել էր 500 քառակուսի մետր տարածք: Կրակի մարմանը մասնակցել են մի քանի տասնյակ հրշեջ հաշվարկներ:

Արտակարգ պատահարի պատճառներն առայժմ պարզված չեն:

## ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ԼԵՊՍԻ ՀԱՄԵՐԳԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՆԵՐԻ ԴԵՄ

*Վրաստանի ներքին գործերի նախարարությունը քրեական գործ է հարուցել Գրիգորի Լեպսի համերգը կազմակերպողների դեմ այն բանից հետո, երբ տեղացի մի լրագրողուհի հայտարարեց, որ իրեն փակի տակ են պահել այն բանի համար, որ ինքն անհարմար հարցեր է տվել:*

Գործը հարուցվել է «անօրինական ազատազրկում» հոդվածով, ինչը Վրաստանի Քրեական օրենսգրքին համապատասխան պատժվում է չորսից մինչեւ հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ: Վրաստանի «Մաեստրո» հեռուստաընկերության լրագրողուհի Նինո Մետրեւելին ասաց, որ երաժշտի հետ հակիրճ հարցազրույցից հետո, թիկնապահներն ու կազմակերպիչները մոտ մեկ ժամ իրեն պահել են սենյակում եւ վիրավորել ոչ կոռեկտ ու ավելի վաղ չհամաձայնեցված հարցերի համար: Լեպսի (իսկական ազգանունը Լեպսվերիձե) համերգը կայացել է դեկտեմբերի 7-ին Թբիլիսիում: Մինչեւ համերգն սկսվելը Վրաստանի մի քանի տասնյակ քաղաքացիներ «ամոթի միջանցք» են կազմել համերգային դահլիճի մոտ՝ ի նշան բողոքի ծագմամբ վրացի արտիստի ռուսամետ դիրքորոշման դեմ:

Բուժում եմ թութքի (հեմորոյի) բոլոր՝ անգամ ամենածանր դրսեւորումները. արյունահոսություն, ճեղքումներ, հանգույցի դուրսընկնելը՝ միայն բուսական, բնական բաղադրիչների հիման վրա պատրաստված ներքին ընդունման դեղորայքով: Արդյունքը 100 տոկոսանոց է: 48 ժամում վերանում է արյունահոսությունը, իսկ 72 ժամում լրիվությամբ ազատվում եք ցավերից: Հեռախոս՝ 5-99-53-08-25, 2-95-40-58, Ջեմալի:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

## ՌՈՒՆ ՄԵՏՐԵՎԵԼԻՆ՝ 75 ՏԱՐԵԿԱՆ



Դեկտեմբերի 7-ին լրացավ վրաց ճանաչված գիտնական եւ հասարակական գործիչ, Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Ռոին Մետրեւելու ծննդյան 75-ամյակը:

***«Վրաստան» թերթի խմբագրությունը սրտանց միանում է ճանաչված գիտնականի, հասարակական գործչի հոբելյանի առթիվ հղված շնորհավորանքներին եւ մաղթում նրան քաջառողջություն, երջանկություն ու հաջողություններ նրա հասարակական եւ գիտական բազմաբնույթ գործունեությունում:***

## ՌԵԶՈ ՉԽԵԻՁԵՆ՝ 88 ՏԱՐԵԿԱՆ



Դեկտեմբերի 8-ին լրացավ վրաց ճանաչված կինոռեժիսոր Ռեզո Չխեիձեի 88-ամյակը: Նա տարբեր տարիներին եղել է Վրաստանի կինեմատոգրաֆիստների միության քարտուղարը, Ռուսթավելու անվան թատերական ինստիտուտի դասախոս, «Վրացֆիլմ» կինոստուդիայի տնօրենը: Արժանացել է միջազգային եւ հանրապետական մրցանակների:

***«Վրաստան» թերթի խմբագրությունն ի սրտե շնորհավորում է վրաց ճանաչված ռեժիսորին ծննդյան օրվա առթիվ, մաղթում քաջառողջություն եւ հաջողություններ ստեղծագործական կյանքում:***

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

## ՇՈԹԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ՍԵՐ, ԿՐԿԵՍ, ՓԱՐԻԶ»-Ը ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*«Սեր, կրկես, Փարիզ»՝ ահա այս վերնագրով հայաստանաբնակ նկարիչ Շոթա Ոսկանյանը Թբիլիսիի կենտրոնում գտնվող Գամրեկելի անվան ցուցասրահում ներկայացրեց իր 30 աշխատանքը:*

Ցուցահանդեսը նախաձեռնել էր Վրաստանի մշակույթի նախարարությունը՝ Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ:

Երկու խոսք նկարչի մասին: Շոթա Ոսկանյանը ծնվել է 1960թ., Երեւանում: 1987թ. ավարտել է Մոսկվայի գեղարվեստական համալսարանը, Հայաստանի նկարիչների միության անդամ է: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երեւանում:

Նկարչի անհատական ցուցահանդեսն այցելող հանդիսատեսը, մտնելով դահլիճ, իսկույն շաղախվում է հեղինակի՝ կյանքի էսթետիկ ընկալման գաղափարախոսությամբ: Ցուցասրահի պատերին փակցված աշխատանքները տանում են մեզ հեղինակի՝ Բոհեմական աշխարհը...

Մեր առջեւ կրկեսի պայծառ լուսամփոփների ճառագայթներով լուսավորված դերասաններ, մարմնամարզիկներ, ծաղրածուներ, թզուկներ... Ահա եւ Փարիզի՝ է.Հեմինգուեյի բնորոշմամբ՝ «Մի քաղաքի, որտեղ միշտ տոն է», գողտրիկ փողոցները, Սենայի գետափնյա հինավուրց կամուրջները... Արհեստավարժ վրձնահարվածներով, որում զգացվում է ռուսական գեղագիտության դպրոցը, հեղինակը հաղորդում է դեռատի կիսամերկ կանանց թափանցիկ մաշկի նազելի թովչանքը...

«Իսպանական գնչուների» պատկերաշարը ինձ հիշեցրեց իսպանական գնչուների կրակոտ «Ֆլամենգո» պարը: «Լսում եմ» կիթառի ռիթմով լարված հիասքանչ մեղեդին, բայց ինձ համար ավելի հոգեհարազատ կլինեՐ՝ լսել հայ հոգու գունաշարի մեղեդին: Հայ արվեստի բոլոր ոլորտներում, բնականաբար, տեսնել, զգալ, լսել հայ արվեստագետի «արեւահամ բառը»:

Թբիլիսցի արվեստագետներին, ի դեպ, հետաքրքրեց հայաստանցի գեղանկարչի «Շոթա» անունը: Պարզվեց՝ հեղինակի պապը որոշակի ժամանակ ապրել էր մեր հիասքանչ Թբիլիսիում, եւ, ի նշան երախտիքի, իր սիրելի թոռնիկին անվանել էր «Շոթա»:

***ՄԵՐՈՒԺԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ***
*ՎՀՆՄ-ի նախագահ, մանրանկարիչ*



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Հողատապ: 9.Քաղաք Վրաստանում՝ Դեդոփլիս ...: 10.Պակիստանի պետական լեզուն: 11.Ձեւով տարբեր, իմաստով մոտ բառեր եւ բառաձեւեր: 13.Հոգատարություն, հոգացողություն: 16.Պողպատյա սառը զենք: 17.Հարվածային երաժշտական գործիք: 19.Որեւիցե բանի առաջաբան, նախաբան: 22.ՌԴ էստրադային խումբ: 24.Կարճ բյուրեղային ապար: 25.Տուփ, ներդիր: 27.Միաբջիջ կենդանի: 29.Ցուլրահատուկ: 32.Տպել: 33.Ղազախստանի մայրաքաղաքը: 35.Համառություն, կամակորություն: 37.Մեսրոպյան այբուբենի տառ: 39.Ծովային ուտելի անատամ: 40.Ջավարի կորկոտով եւ ցորենով պատրաստվող պասուց կերակուր: 43.Ճապոնիայի պաշտոնական տարադրամը: 44.Գետ Հյուսիսային Կովկասում: 47.Քարանձավ, քարայր: 49.Ռուս գեներալ Ալեքսանդր ...: 50.Հոնկոնգյան եւ ամերիկյան դերասան... Չան: 53.Քարթլիի թագուհի, Վրաց ուղղափառ եկեղեցու Սրբերից: 54.Քաղաք Ճապոնիայում: 55.Իրանահայ երգիչ: 57.Քաղաք Ֆրանսիայում: 58.Կաբարդինո-Բալկարիայի մայրաքաղաքը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ծուռթաթ ձագ: 2.Խաշած ու թեփահան արած ցորեն, կորկոտ: 3.Կելտական քուրմ: 4.Պինդ, ածխածնով հարուստ այրվող օգտակար հանածո: 5.Վրացի կինոռեժիսոր եւ քաղաքագետ ... Ղողոբերիձե: 6.Աչքի վերեւում: 8.Մ.թ.ա. 170-145թթ. Իբերիայի թագավոր, հայոց Արտաշես I թագավորի որդին: 12.Տուրգենեւի երկերից: 14.Վրացի ռեժիսոր եւ պրոդյուսեր ... Մաչաիձե: 15.Հորթ: 18.Բելգրադի բնակիչ: 19.Շվի: 20.Խորհրդային դերասան ... Սմոկտունովսկի: 21.Լավ կերակրել, գիրացնել: 23.Աֆրիկական ծառ: 26.Ճապոնական համալիր-վարժություն: 28.Լեռ պատմական Կիլիկյան Հայաստանի ծայրամասում՝ Միջերկրական ծովի ափին: 29.Ռուսական ավտոմեքենա: 30.Փափուկ կոնֆետ: 31.Ծուլանալ: 34.Մարզկենտրոն ՌԴ-ում: 36.Ամերիկացի գրող ... Բրաուն: 38.Քաղաք ներկայիս Իրանի հյուսիս-արեւմուտքում: 41.Լոկատոր: 42.Մարզ, նահանգ: 45.Վայրի հնդկահավ: 46.Բագրատունի հայոց թագավոր: 48.Կիլոկալորիա (կրճատ): 51.Հարցական դերանուն: 52.Վրացական նախկին հեռուստաալիք: 56.Հանգուցյալի մարմին:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Բանուկ: 10.Մարմարայի: 11.Ադապտացիա: 12.Նետեր: 13.Բոլերո: 14.Ակնարկ: 16.Մարոն: 17.Մարագ: 20.Արթուր: 21.Ցունամի: 22.Թամար: 23.Մակդիր: 26.Փիլոն: 29.Օկտեդ: 32.Գրաստ: 35.Ապրես: 36.Արենա: 37.Նանիր: 38.Սինուս: 39.Բալետ: 40.Դիդրո: 41.Արաբո: 42.Սաադի: 44.Նարեկ: 47.Նարին: 49.Միգրեն: 51.Բաբիկ: 52.Մորգան: 56.Կկվին: 58.Ասպետ: 61.Արթիկ: 62.Նյուտոն: 63.Աստանա: 64.Տարտու: 65.Մակարենկո: 66.Նարցիս: 67.Ան: 68.Նինոս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բագրատունի: 2.Սաքոն: 3.Զարենց: 4.Բինոմ: 5.Նետ: 6.Կարագ: 7.Պառնաս: 8.Ատարա: 9.Վիտրուվինոս: 13.Բոկաչո: 15.Կրծկեր: 18.Ասանկ: 19.Արամե: 24.Ֆարադեյ: 25.Գրենադա: 26.Փանոս: 27.Լանկա: 28.Նարդի: 29.Օսսոն: 30.Տենոր: 31.Դասակ: 32.Գաբոն: 33.Ադլեր: 34.Տիտան: 43.Դարվին: 45.Արաքս: 46.Եղիշե: 48.Ավրորա: 50.Իսկական: 53.Ալիմյան: 54.Բետոն: 55.Սատար: 57.Նյարդ: 58.Անտոն: 59.Պեր: 60.Տաունս: 61.Անթիվ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնեւլի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445